Հավելված N 1
ՀՀ կառավարության 2024 թվականի
դեկտեմբերի 5-ի N 1912-Ն որոշման

ՄԱՍՆԱԳԻՏԱԿԱՆ ՈՒՍՈՒՄՆԱԿԱՆ ՀԱՍՏԱՏՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԱՏԵՍՏԱՎՈՐՎԱԾ ՄԱՆԿԱՎԱՐԺԱԿԱՆ ԱՇԽԱՏՈՂՆԵՐԻ ԴՐՈՒՅՔԱՉԱՓԻ ՓՈՓՈԽՈՒԹՅԱՆ ԵՎ ՀԱՎԵԼԱՎՃԱՐԻ ՍԱՀՄԱՆՄԱՆ ԿԱՐԳԸ ԵՎ ՉԱՓԸ

I. ԸՆԴՀԱՆՈՒՐ ԴՐՈՒՅԹՆԵՐ

1. Սույն կարգով սահմանվում են արհեստագործական և միջին մասնագիտական կրթական ծրագրեր իրականացնող պետական ուսումնական հաստատությունների ատեստավորված մանկավարժական աշխատողների դրույքաչափի փոփոխության և հավելավճարի սահմանման իրավահարաբերությունները:

2. ՀՀ կրթության, գիտության, մշակույթի և սպորտի նախարարի 2024 թվականի փետրվարի 7-ի N 07-Ն հրամանի 2-րդ հավելվածով հաստատված կարգի (այսուհետ՝ ատեստավորման կարգ) 40-րդ կետի 1-ին, 2-րդ և 3-րդ ենթակետերով սահմանված արդյունք ցուցաբերած մանկավարժական աշխատողների դրույքաչափը փոխվում է՝ սահմանվելով 200.000 դրամ՝ մեկ դրույք զբաղվածության համար, որի նկատմամբ կիրառվում է համապատասխան չափով հավելավճարը, իսկ 40-րդ կետի 4-րդ ենթակետով սահմանված արդյունքը ցուցաբերած մանկավարժական աշխատողների դրույքաչափը փոխվում է՝ սահմանվելով 200.000 դրամ՝ մեկ դրույք զբաղվածության համար՝ առանց հավելավճարի տրամադրման:

3. Ատեստավորումն անցած մանկավարժական աշխատողներին հավելավճար սահմանվում է ատեստավորման կարգի 40-րդ կետի 1-3-րդ ենթակետերով սահմանված դեպքերում՝ 5 տարի ժամկետով, հետևյալ տրամաբանությամբ՝

1) ատեստավորման 90-100 տոկոս արդյունք ցուցաբերելու դեպքում՝ 50 % հավելավճար՝ մանկավարժի աշխատավարձի նկատմամբ.

2) ատեստավորման 80-89 տոկոս արդյունք ցուցաբերելու դեպքում՝ 40 % հավելավճար՝ մանկավարժի աշխատավարձի նկատմամբ.

3) ատեստավորման 70-79 տոկոս արդյունք ցուցաբերելու դեպքում՝ 30 % հավելավճար՝ մանկավարժի աշխատավարձի նկատմամբ.

4) հավելավճարը հաշվարկվում է միայն ատեստավորված ուղղությամբ բոլոր հաստատություններում փաստացի դասավանդող ժամերին համապատասխան հաշվարկվող մանկավարժական աշխատավարձի նկատմամբ:

4. Մեկ հաստատությունից մանկավարժական աշխատողի այլ հաստատություն տեղափոխման արդյունքում հավելավճարը պահպանվում է:

5. Ատեստավորման կարգի 40-րդ կետի 1-4-րդ ենթակետերով սահմանված արդյունքների դեպքում մանկավարժական աշխատողը կարող է իր նախաձեռնությամբ և իր միջոցների հաշվին երկրորդ անգամ դիմել ու մասնակցել նախարարության կողմից իր ուղղությամբ հաջորդ կազմակերպվելիք երաշխավորած կազմակերպության վերապատրաստման դասընթացին և ատեստավորման գործընթացին՝

1) նախորդ արդյունքին հավասար արդյունք ցուցաբերելու դեպքում մանկավարժական աշխատողի հավելավճարի չափը պահպանվում է, որի համար սահմանվում է հնգամյա նոր ժամկետ.

2) ատեստավորման կարգի 40-րդ կետի 2-3-րդ ենթակետերով սահմանված արդյունք ցուցաբերած արդյունքի համեմատ ավելի բարձր արդյունք ցուցաբերելու դեպքում մանկավարժական աշխատողը հավելավճար է ստանում վերջին արդյունքի հիման վրա, որի համար սահմանվում է հավելավճար ստանալու հնգամյա նոր ժամկետ.

3) նախորդ արդյունքի համեմատ ավելի ցածր արդյունք ցուցաբերելու դեպքում հավելավճարը պահպանվում է արդեն սահմանված չափով և ժամկետով:

6. Ատեստավորում անցած մանկավարժական աշխատողը ատեստավորում անցած ուղղությամբ համատեղությամբ աշխատելու դեպքում հավելավճար ստանում է և՛ հիմնական, և՛ համատեղությամբ աշխատավայրից, որոնց հանրագումարային ծանրաբեռնվածությունը չի կարող գերազանցել աշխատանքային օրենսգրքով սահմանված առավելագույն աշխատաժամանակը: Յուրաքանչյուր աշխատավայրում հավելավճարը հաշվարկվում է նախարարի հրամանով հաստատված ուղղության

ոլորտին առնչվող և մանկավարժական աշխատողի կողմից դասավանդվող մոդուլների ժամաքանակների հանրագումարի հաշվարկով և այդ ժամերին համապատասխան հաշվարկվող մանկավարժական աշխատավարձի նկատմամբ:

7. Սույն կարգի 3-րդ կետով սահմանված հավելավճարները ներառում են աշխատավարձից վճարվող հարկերը, սոցիալական կամ օրենքով սահմանված պարտադիր այլ վճարներ:

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ՎԱՐՉԱՊԵՏԻ ԱՇԽԱՏԱԿԱԶՄԻ
ՂԵԿԱՎԱՐԻ ՏԵՂԱԿԱԼ Ա. ԽԱՉԱՏՐՅԱՆ

05.12.2024
ՀԱՎԱՍՏՎԱԾ Է
ԷԼԵԿՏՐՈՆԱՅԻՆ
ՍՏՈՐԱԳՐՈՒԹՅԱՄԲ